Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

2023 թ. պատադիր ատեսատավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Հետազոտական աշխատանք հայոց լեզվից և գրականությունից

Թեմա՝ Ուղղագրության ուսուցման հիմանախնդիրները

Կատարող՝Թ.Քոչարյան

Ղեկավար՝բ.գ.դ. պրոֆ. Ա.Գալստյան

Ներածություն

Ուսուցումը ոչ միայն գիտելիքների ձեռքբերման միջոց է, այլև հասարակության մեջ անձի զարգացման,ձևավորման,հասարակական խնդիրներին ինքնուրույն մոտեցման և դաստիարակության միջոց: Ուսուցման ցանկացած գործընթաց պետք է ապահովի անհատի այնպիսի ձևավորում, որ ունենա հարուստ բառապաշար, որի ճիշտ գործածությամբ մասնակից դառնա հասարակության արդյունավետ զարգացմանը, մասնակցի ստեղծագործական արժեքների ստեղծմանը,նոր բովանդակություն հաղորդի մշակութային կյանքին,հասարակական-քաղաքական հարաբերություններին,լեզվական համակարգի կատարելագործման գործընթացին ազդի: Յուրաքանչյուր հարցի լուծմանը անհրաժեշտ է գրագետ մոտեցում, պատկերավոր հարուստ խոսք՝բառապաշարի ճիշտ գործածությամբ, որը կօգնի մարդուն բովանդակ և իմաստալից արտահայտելու մտքերը, նպատակային գործածությամբ հասնելու խնդրի լուծմանը:Այս բոլորին նպաստում է ուղղագրական և ուղղախոսական կանոնների յուրացմանը:

Տարբեր մեթոդների կիրառմամբ սովորողը կընկալի ուղղագրության մեջ բառիմաստի ճիշտ գործածությունը, կհարստացնի բառապաշարը, կմշակի հմտություններ գրավոր և բանավոր խոսքը պատկերավոր ու մատչելի դարձնելու համար:

Հետազոտության առարկան ղ-խ-ի ուղղագրությունն է, որը հնարավորություն կտա ոչ միայն ճիշտ գրելու, այլև տարբեր ոլորտներում պատկերավոր կիրառելու այդ ուղղագրությանը առնչվող բառապաշարը.

այդ դեպքում այն կդառնա միջոց կյանքի տարբեր ոլորտներում ակտիվ գործունեության համար, կակտիվացնի հասարակական կյանքին գիտակցական մոտեցումը , կնպաստի միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:

Կառուցվածքը-Աշխատանքը բաղկացած է ներածությունից,մեկ գլխից, եզրակացությունից:Աշխատանքին կից ներկայացված է օգտագործված գրականության ցանկը:

Ղ-խ-ի ուղղագրության ուսուցման հիմանախնդիրները

1.Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության հիմքում ընկած են հիմնականում պատմական կամ ավանդական և հնչյունական սկզբունքները[1]:Ուղղագրության ուսուցումը շարունակական գործընթաց է, որը ակնկալում է կանոնների յուրացում լեզվի տարբեր բաժինները ուսումնասիրելիս: Ըստ այդմ՝ կներկայացնենք ղ-խ-ի ուղղագրության ուսուցումը հետևյալ բաժիններում.

1)«Հնչյունաբանություն»

2)«Բառագիտություն»

3)«Ձևաբանություն»

4)«Ոճաբանություն»

2.Մշակել ղ-խ-ի ուղղագրության շուրջ արդյունավետ միջոցներ, որոնք կնպաստեն բառապաշարի հարստացմանը:

3.Ղ-խ-ի ուղղագրության շրջանակներում նոր բառերի գործածությամբ կազմել կապակցված խոսք հետևյալ քայլերով՝ բառ- բառակապակցություն, նախադասություն, կապակցված խոսք:

4.Մշակել թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ:

1.Ա.Մ.Սուքիասյան..«Ժամանակակից հայոց լեզու»,Երևան,2004թ.,էջ 72

Ուղղագրությունը ունի տեսական և գործնական բավական մեծ նշանակություն, իր միակերպությամբ նպաստում է գրական լեզվի զարգացմանը, գրագիտության բարելավմանը՝ ելակետ ունենալով այն սկզբունքները, որ մշակել է գրավոր լեզուն իր պատմական զարգացման ընթացքում[2]:

Ուղղագրությունը հիմնականում լինում է 3 տեսակ՝

1.հնչյունային

2.ավանդական

3.ձևաբանական

Հնչյունային ուղղագրության դեպքում բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Բայց այն երբեք անփոփոխ չի մնում և ժամանակի ընթացքում փոփոխություններ կրելով՝ հիմք է դառնում այլ տեսակի ուղղագրության, որի դեպքում բառերը գրվում են ոչ թե այնպես, ինչպես արտասանվում են, այլ այնպես, ինչպես գրվել են անցյալում՝ ավանդական ուղղագրությամբ: Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը հնչյունային, որոշ չափով ավանդական- պատմական ուղղագրություն է:

Աշակերտների համար դժվարություն է ներկայացնում ղ-խ-ի ուղղագրությունը: Եթե խ բաղաձայնը բոլոր դեպքերում ինչպես արտասանվում է, այնպես էլ գրվում է, ապա ղ բաղաձայնի դեպքում այդպես չէ:

2.Ա.Մարգարյան.«Ժամանակակից հայոց լեզու»,Երևան, 1997 թ.,էջ 160

Բ, տ, կ, փ, թ , ձ, ց , ջ , ծ բաղաձայններից առաջ արտասանվում է խ[3].

ա) բ բաղաձայնից առաջ՝ աղբ, աղբյուր, ողբ , եղբայր.

բ) տ բաղաձայնից առաջ՝ աղտ, կեղտ, ուղտ, պղտոր, քողտիկ, տաղտուկ, տուղտ

գ) կ բաղաձայնից առաջ՝ կաղկանձ, փեղկ, բողկ, հղկել, խեղկատակ, ձաղկել,

դ) փ բաղաձայնից առաջ՝ ճողփյուն, շաղփաղփել

ե) թ բաղաձայնից առաջ՝ հաղթել, մաղթել, գաղթել, շղթա, Գողթն, թուղթ

զ) ձ բաղաձայնից առաջ՝ դաղձ, դեղձ, դեղձան, դեղձանիկ

է) ց բաղաձայնից առաջ՝ քաղց, քաղցր, աղցան

ը) ջ բաղաձայնից առաջ՝ աղջիկ, ողջ, ամբողջ, եղջյուր, զղջալ

թ) ծ բաղաձայնից առաջ՝ կեղծ,պիղծ, եղծելի։

Վերոհիշյալ բառերի ուղղագրությունը հիշողությամբ ամրակայելու համար հանձնարարվում է կապակցված խոսքի շարադրանք ղ-ի և խ-ի առանձին խմբերով ուղղագրության շուրջ։

1-ին խումբ՝ ախտ, բախտ, թախտ, դժոխք, դրախտ, կմախք, տախտակ, վխտալ, վախճան, ուխտ, խախտել, դժխեմ, թախծադեմ, պանդուխտ։

3.Ա.Մարգարյան.«Ժամանակակից հայոց լեզու»,Երևան, 1997 թ.,էջ 205

2-րդ խումբ՝ գաղտնի, գաղտագողի, աղքատ, կողպեք, շղթա, կաղկանձ, փեղկ, փողք, ճեղք, սանդուղք, շողք, քաղց, մեղկ, մեղք, խիղճ, խեղճ, մաղթանք, առողջություն:

3-րդ խումբ – բառարանից դուրս գրել խ բաղաձայնով գրվող բույսերի և կենդանիների բառաշարք՝ սոխ, սխտոր, գխտոր, սիբեխ, սպանախ, թխկի, կխտար, տառեխ:

4-րդ խումբ - բառարանից դուրս գրել ղ բաղաձայնով գրվող բույսերի և կենդանիների բառաշարք՝ խաղող, ողկույզ, դեղձ, բողկ, շաղգամ,

պղպեղ, տուղտ, ուղտափուշ, ուղտ, կուղբ, եղջերու:

Ղ-խ-ի ուղղագրության յուրացումը կարելի է կատարել ստուգաբանությամբ. բառը ձևափոխել այնպես, որ «կասկածելի» ղ կամ խ բաղաձայնին հաջորդի ձայնավոր:

Օրինակ՝ շողք – շողալ

փողք – փողոց

կողք – կողակից

ծաղկել – ծաղիկ

մեղք – մեղավոր

բոցամուղ – մղել

գաղթական – գաղութ

խեղկատակ – խեղաթյուրել

սանդուղք – սանդղակ

թախծել – թախիծ

վախկոտ – վախենալ

փախչել – փախուստ

խախտել – խախուտ

երկնամուխ – մխրճվել

հորդաբուխ – բխել

դժոքխ – դժոխային

հախճապակի – խիճ

Ղ-խ-ի ուղղագրությունը «Բառագիտություն» բաժնի շրջանակներում ուսումնասիրելիս ելակետ ենք ընդունում բառակազմությունը։

1.Ղ-խ-ի ուղղագրությունը արմատի կրկնությամբ, օրինակ՝ ջախջախել, շողշողալ, փողփողալ, սրախողխող։

2.Բառերի ածանցմամբ և բառաբարդմամբ, օրինակ՝

թուղթ – թղթախաղ	աղտ – աղտոտ
խեղճ – խղճուկ	ախտ – ախտածին
ուղտ – ուղտապան	ուխտ – ուխտադրուժ

Ղ-խ-ի ուսումնասիրությունը կատարվում է նաև բառիմաստային աշխատանքների շրջանակում։

1. Համանուններով նախադասությունների կազմում,օրինակ՝

աղտ (կեղտ) – ախտ (հիվանդություն)

Համանուններ են կոչվում ձևով նույնական,իմաստով տարբեր բառերը[4]։

2.Կազմել հականիշային զույգեր,օրինակ՝

զուլալ – պղտոր

մաքուր – պիղծ

վեհանձն – նողկալի

հարուստ – աղքատ

բացահայտ – գաղտնի

դառը- քաղցր

3.Կազմել բացասական հատկանիշ արտահայտող հոմանիշային բառաշարք, օրինակ՝ աղտոտ, կեղտոտ, կեղծ, պիղծ, եղկելի, նողկալի, լղպոր, պղտոր, եղծելի։

4. Տրված հարանուններով կազմել նախադասություններ՝ ընկալելով իմաստային տարբերությունը,օրինակ՝

տախտակ – տաղտուկ

հորդաբուխ – ջրմուղ

ուխտատեղ – ուղտատեր

4.Գ.Բ.Ջահուկյան,Է.Աղայան,Վ.Ա.Քոսյան.«Հայոց լեզու»,Երևան,1980թ.,էջ 234

5.Բառախաղի օգնությամբ ուղղագրության ամրակայում։

Լրացնել ղ կամ խ։

Օրինակ՝ Ա.տը գիտի, թե որտեղից է ա.տը։

Ու.տը գնաց ու.տի։

6.Դարձվածքների ուսումասիրության շրջանակում նույնպես զգալի են ղ-խ-ի ուղղագրության բառերը։ Նախ սովորողը պետք է տարբերակի բառակապակցությունը դարձվածքից որպես 2 և ավելի բառերի կայուն կապակցություն, որը փոխաբերաբար արտահայտում է մի նոր՝ միասնական իմաստ[3]։

Կարելի է կատարել 2 տիպի աշխատանք։

1.Դարձվածքային հոմանիշ կազմել։

Լուն ուղտ դարձնել – շյուղը գերան դարձնել

Ուղտի ականջում քնել – երկնքից ընկած

Քաղցր աչք – աչքի լույս

2.Բացատրել դարձվածքի իմաստը։

Բերանը կեղտոտել – հայհոյել

Կատվի դրախտ – անիմաստ կյանք

Կողպեքի տակ պահել - թաքցնել

Հինգ եղբայր – ապտակ

Կողքով անցնել – վրիպել

Հայացքը փախցնել – խուսափել

Պղտոր ջրում ձուկ որսալ – իրարանցումից օգտվել

Սև թուղթ – մահվան գույժ

3.Հ.Զաքարյան,Յու. Ավետիսյան.«Բառագիտություն»,Երևան,2016թ.

Ղ-խ-ի ուղղագրության ուսումնասիրությունը «Զևաբանություն» բաժնի շրջանակում

Խոսքի մասերի ուսուցման ժամանակ աշակերտների բառապաշարը հարստանում է ղ-խ-ի ուղղագրությամբ բառերի յուրացմամբ: Այս դեպքում ղ-խ բաղաձայնների ուղղագրության յուրացումը կատարվում է՝ ըստ խոսքի մասերի:

1.Գոյական անունը ուսուցանելիս ուշադրություն պետք է դարձնել հատուկ անունների ուղղագրությանը.

ա) Խ բաղաձայնի ուղղագրությամբ՝ Երասխ, Ճորոխ, Վախթանգ, Ջավախք, Դժոխք Հրայր, Դրախտային Թռչուն համաստեղություն:

Դուխտ բաղադրիչով հատուկ գոյականներ՝ Որմիզդուխտ, Խոսրովդուխտ, Ծահանդուխտ

բ) Ղ բաղաձայնով գրվող հատուկ անուններ՝ Աղստև, Աղթամար կղզի, Ծաղկունյաց լեռնաշղթա, Գողգոթա, Այծեղջյուր համաստեղություն, Ընձուղտ համաստեղություն, Ծաղկազարդ եկեղեցական տոն, Հաղթական կամար,

Դեղձուն- Ծամ, Աղբյուր Սերոբ,Տղմուտ գետ։

Ածական անուն- Գրավոր խոսքում հաճախ են հանդիպում ղ-խ-ի ուղղագրությամբ ածականներ։ Այդ նպատակով տրված բառերով հանձնարարելի է շարադրանք գրելը՝ գաղտնի, քաղցր, թախծադեմ, չքնաղ, երկնամուխ, մեղմօրոր, մեղավոր, գողտրիկ, ինքնաբուխ, ցողաթաթախ։

Այսպիսի առաջադրանքը կնպաստի բառապաշարի հարստացմանը և բանավոր խոսք կազմելուն։

«Բայ» թեման անցնելիս սովորողի մոտ խնդիրներ է առաջացնում ենթակայական դերբայի տարբերակումը։ Այդ նպատակով կարելի է կատարել հետևյալ աշխատանքները։

1)Տ-աձև աղյուսակով տարբերել ենթակայական դերբայը՝ -ող վերջավորությամբ արմատական վերջնահնչյունակապակցությունից

շոշափող – հրացանափող

հավաքող – սևասքող

դրվագող – խաչագող

2) Կետերի փոխարեն տեղադրել ղ կամ խ։

Կատակո . , հերթափո . , անփոփո . , զինաթափո . , ոտնակո . , ամփոփո . :

3) – Ող ածանցը տարբերել ենթակայական դերբայի -ող վերջավորությունից:

- Ող (ածանց) – ուսանող, լրագրող, քերթող, մատուցող, ընտրող, անկարող, ծնող:

- Ող (վերջավորություն) – հարմարվող, նկարող, քայլող, լսող

«Ձայնարկությունների» ուսումնասիրման ժամանակ ղ – խ բաղաձայնների ուղղագրությամբ հանդիպում են զգացական և նմանաձայնական ձայնարկություններ։

Օրինակ՝ օ՞խ, ա՞խ, վա՞խ, չը՛խկ, չրը՞խկ, թրը՞խկ։

Եզրակացություն

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրզկացությունները.

1. Ղ – խ-ի ուսուցումը չի սահմանափակվում 6- րդ դասարանի ծրագրով. այն շարունակական գործընթաց է հաջորդ դասարաններում գրական ստեղծագործությունները ուսումնասիրելիս: Այն նպաստում է նաև բառապաշարի հարստացմանը:

Օրինակ՝ Գր. Նարեկացի – սոս ու տոսախ ծառեր (« Տաղ Վարդավառի»)

սիրաբողբոջ տարփանք (« Մեղեդի ծննդյան»)

իբրև ճրագ մի բազմականթեղ(«Մատյան ողբերգության»)

2.Խոսքի մասերի համակողմանի ուսուցումը միջին դպրոցում նպաստում է ուղղագրության ուսուցմանը իր տարբեր դրսևորումներով, օր.՝ ենթակայական դերբայի ուսուցում(ող,ացող):

3.Լեզվաբանական առանձին տերմինների գործածությունը նպաստում է ուղղագրական կանոնների ամրապնդմանը,օր.՝ ստորոգյալի զեղչում, ածականի բաղդատական աստիճան և այլն:

4. Ղ – խ-ի գործնական ուսուցումը ծավալվում է իմացության տարբեր ոլորտներում, հիմնական դպրոցում՝ նաևմյուս առարկաների ուսումնասիրության ժամանակ՝ ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, բնագիտություն, պատմություն:

5. Ղ – խ-ի ուսուցման նպատակն է ճիշտ գրելու, խոսքը ճիշտ կազմելու հմտությունների մշակումը, նաև իմացական, տրամաբանական

մտածողության զարգացումը: Լեզվաբանական այս խնդիրների լուծումը իրականացվում է հիմնական դպրոցում բոլոր առարկաները ուսուցանելիս:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ա.Մարգարյան.«Ժամանակակից հայոց լեզու», 1997 թ.

2.Հ.Զաքարյան,Յու. Ավետիսյան.«Բառագիտություն»,Երևան,2016թ

3. Ա.Մ.Սուքիասյան..«Ժամանակակից հայոց լեզու»,Երևան,2004թ.,էջ 72

4. Գ.Բ.Ջահուկյան,Է.Աղայան,Վ.Ա.Քոսյան.«Հայոց լեզու»,Երևան,1980թ.,էջ 234